

ԱՐՏԱԾԻՍԱԿԱՆ ՍԳՈ ԵՐԳԵՐ

Մեզ հասած ժողովրդական մահերգերի մի ստվար բաժինը հորինված է ոչ թե որպես հուղարկավորության ընթացքում երգվող ծիսական երգ, այլ որպես ծանր ողբերգական դեպքի ազդեցությամբ հյուսված երգ, որ երգվում է տխուր առիթներով: Սակայն, քանի որ սրանց թեման անհատի մահվան եղերական պատմությունն է, ուստի նպատակահարմար է դրանք ևս քննության առնել սգո երգերի շարքում, որպես վերջիններիս մի ենթատեսակ և անվանել *հիշատակի երգեր*:

Հայ ժողովրդի հագարամյա պատմության ընթացքում ակնթարթներ են եղել իսադադ ժամանակները, մնացածը կռիվ էր ու արյուն, ընդհարում ու պատերազմ, կոտորած ու պայքար. «Ծիծաղը կտրած, ուրիշոթունը կտրած, լացը լիզյը, դարդը լիզյը»<sup>1</sup>: Միշտ ծավալուն է եղել հայ ժողովրդի վիշտն ու արցունքը, նրա վարդը արյան գույնի էր ու արյուն էր թուրում, նրա բարձրաբերձ լեռներն ու կանաչ դաշտերը արյունով էին ներկվում, որբացած, այոհացած մի ողջ երկիր էր սգում դարեր շարունակ: Բայց չի լռել երգը. այն գեղեցիկ է մերթ սիրո շշուկներ, մերթ կարոտի տրտունջներ, մերթ ուրախության ու հարսանիքի թնոյուններ, մերթ աշխատանքի բարբառներ, մերթ էլ՝ անխուսափելիորեն՝ մահվան մրմունջներ: Երգով է քնել ու աբթնացել հայը, երգով ճաշել ու իմել, ուրախացել ու հրճվել, սիրել ու կարոտել, մահ սխրել ու սգացել, երգով պատերազմել, պարտվել ու հաղթել: Երբ վտանգի մեջ էր հայտենիքը, եայլավստույն տղամարդը երագել է կռվի դաշտում

գոհվել: Միջնադարյան հայրենի աղաչում է ամենակարողին.

*Ով իմ արարիչ Աստուած,  
Մի՛ առներ ի մահ իմ սիրուս.  
Իմ մահ պատերազմ արա՛  
Մէջ խազար թափած թրերոյ.  
Մարդ, որ պատերազմ մեռնի,  
Պարտ է վերայ վանք շինելոյ.  
Մարդ, որ հասարաթով մեռնի,  
Չի պատի ի հող թաղելոյ*<sup>2</sup>:

Հայոց միջնադարը, որ ժողովրդական բարձրարվեստ երգերի շարքեր է թողել մեզ, լի էր ավերով ու կոտորածով, դրա համար այդ երգերի մի մասը վերաբերում է հայ ժողովրդին բաժին ընկած աբհավորքներին ու արյունահեղություններին<sup>3</sup>: Սրանք շատ ավելին են, քան մեկ մարդու մահը սգացող վշտերգերը և ունեն ավելի անանձնական, ընդհանրացնող բնույթ:

Միշտ թշնամիներով շրջապատված, ահ ու սարսափի, արյան ու նախճիրի մեջ տոջորվող ժողովուրդը իր վրշտն ու դժբախտությունը սգում էր այլարանորեն բլբուլի ու կաքավր անունից: Անուշաձայն, գեղեցիկ ու հալածվող այս երկու թոջուններին՝ իրենց վարք ու բարքով մեր ժողովուրդը մանեցնում էր իրեն:

Այս ողբերի մի մասը մայրական սգերգեր են: Արյուն-արցունք է թափում կաքավր՝ որդուն տարել են անհայտ ուղղությամբ.

*Չագուկս ի բունես առած,*

<sup>2</sup> *Մնացականյան Ա.*, Հայրեններ, էջ 789:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 757:

Նման երգեր են տպագրվել «Բազմավեպում» (1845), Մ. Միանսարյանի «Քնար հայկականում», «Բյուրակնում» (1899), «Էմինյան ազգագրական ժողովածուում» (հ.6), «Ազգագրական հանդեսում» (գիրք 12), Ա. Մնացականյանի «Հայկական միջնադարյան ժողովրդական երգերում» և այլն:

<sup>1</sup> Անձնական գրառումներ, Լեոնային Ղարարաղ, գ. Աշան, 1994 թ. հունվարի 3:

*Ոչ ի սար գիտեմ, ոչ ի ծոր.*

Այս կորստյան անորոշությունը կրկնակի է տանջում վշտակեղեք մորը, նա աղաչում է բուրդին գտնել ու վերադարձնել իր որդուն, սփոփել իր տառաայալ սիրտը.

*Վա՛յ գտնողին, չի տուողին,*

*Վա՛յ անոր կորսնցնողին<sup>4</sup>:*

Ձագակորույս կաքավը տեղ չի գտնում դադարելու և լավ է համարում ինքն իրեն վառել, քան գգալ անտանելի հոգեկան տառապանքներ:

Ողբացող սոխակի բողոքը ուղղված է հրեշտակին, որ անընդհատ սիրած յարեր ու միամորիկ որդիներ է տանում<sup>5</sup>:

Ողբերգերի մի ստվար շարք է հորինվել Արևմտյան Հայաստանի կոտորածների տարիների: Դրանք ներկայացնում են ժողովուրդին հասած անօրինակ մարմնական ու հոգեկան տանջանքներ: Հայրենի լեռներից ու հովիտներից ելած վաճառ, հրով ու սրով մեռնելու ահը սրտներում, արցունքները քամված, առանց ընդմիջելու ու հանգստանալու, քայլում էին մարդկանց խմբերը սարերով ու ձորերով դեպի մահ ու արեավիրք: Մի կուն ջրի, մի պատառ եացի կարոտ, իրենց գավակների ու ծնողների մորթվելը տեսնելով, անթաղ դիակներ ու խոշտանգված մարմիններ շրջանցելով<sup>6</sup>:

*Ո՞ւր է մայրիկ, ո՞ւր է իմին հայրիկը:*

*Չես գիտեր, որ վատ է թուրքին դանակը,*

*Ո՞ւր է, մայրիկ, ո՞ւր է անոր դիակը,*

*Արցունքն իջավ մինչև սրտիս հատակը<sup>7</sup>:*

Անսովոր ողբերգությունը բերում է նմանը չունեցող արտաբայտման ձևեր: Անագորույն վիշտը չի տեղավորում բառերի ու նախադաս-

ությունների սահմաններում. մանուկներին ողջ-ողջ թաղում են հորերի մեջ: Մայրը խնդրում է բուրդ մարդկանց, բնությանը՝ գտնել ու վերադարձնել իր փոքրիկ աղջկան՝ մեռած կան կենդանի, և նրա ուփակի վրա ամբողջ ազգը պիտի լա: Նշանած Համբարձումին զարկել են, դիակը վերցնող չկա, թող Ջարուհու վարսերը բարակ հյուսեն ու կրտսեր եղբոր համար հարս տանեն, նրան կարոտ գնաց ավագ եղբայրը<sup>8</sup>: Այս սովորությունը պահպանվում է հայերի մեջ: Այժմ էլ Արցախում հաճախ գոհված եղբոր հարսնացուն ամուսնանում է մյուս եղբոր հետ, չի ամարգում սիրած երիտասարդի հիշատակը օտար մեկին հաղսնանալով, Որդեկորույս մայրը ծոցը լցրել է ժառանգի խոսքերով, վախենում է թափվեն, - ավելի ռանաստեղծական մտածողություն, նուրբ գեղարվեստական պատկեր հնարավոր չէ պատկերացնել, - երագում է գետնի վոայի քարը լինել ու կրել որդու ոտնահետքի դրոշմը: Այրին «սուգ ու շիվան» է անում անտեր, վիրավոր վերադարձած ծիու տիրոջ համար, ամպն ու մութը տիրել են ողջ աշխարհին:

Հայկական դարավոր սգերգությունը ունի երկու թև. մարդու մահը սգացող երգեր և եայրենի բնակավայրի կորուստը ողբացող երգեր: Երկուսն էլ սկզբնավորվելով բանահյուսության մեջ, հետագա զարգացում են ապրել գրողների գրչի տակ: Բնակավայրերն էլ ողբերգվում են հիմնականում մարդկային կորստի տեսանկյունից: («Սասուն», «Ատանայի կոտորածը», «Մալայի ողբը»): Վերջինիս քնարական եերոսուհու սիրտը ծփում է ալիքի նման՝ հայրենիքը հիշելով, աչքերը կուրանում են լալուց.

*Այնտեղ կռվեց ընկավ իմ հայր,*

*Այնտեղ մեռան իմ քույր, եղբայր,*

*Այնտեղ մեռավ իմ քաղցրիկ մայր,*

*Այնտեղ մեռնել ինձ ո՞վ կտար<sup>9</sup>:*

Հեղեղի պես հոսում է արյունը, ազատության ձգտողները արյունաշաղախ ընկած են ձորե-

<sup>4</sup> *Գրիգորյան 3.9.*, նշվ. աշխ., հ.5, էջ 174:

<sup>5</sup> *Գրիգորյան 4.*, նշվ. աշխ., հ.5, էջ 174:

<sup>6</sup> Ողբի և կոտորածի երգեր են տպագրվել Ա. Փախլանյանի կազմած «Հայրենի երգեր», «Արյան ձայներ» (1906), «Վազգեն» երգարան, Ա. Բրուսյանի «Ռամկական մրմունջներ», «Մրմունջք եայկական» (1901), «Ազգային ընդարձակ երգարան» (1932), «Տատրակ Տարօնոյ» (1910), «Նոր քնար հայկական» (1897), Հ. Հայկազունու «Երգարան» (1909), «Երգարան ժողովրդի համար» (1917), Վ. Սվազյանի «Կիլիկիա», Ա. Ղազիյանի «Հայ ժողովրդական ոսգիի և զինվորի երգեր» և այլ ժողովածուներում:

<sup>7</sup> *Սվազյան 4.*, Կիլիկիա, Երևան, 1994, էջ 175:

<sup>8</sup> Նշվ. աշխ., էջ 177:

<sup>9</sup> Նշխարներ Համշենի և Տրապիզոնի ռանահյուսության, Երևան, 1986, էջ 144:

րում, գնդակները կարկտի պես թափվում են, դիակներով ծածկված է երկիրը: «Վայ աման» երգը<sup>10</sup> մի հանգուցյալի չի ողբում, այլ մի ամբողջ իռնաբ (այսպես նաև «Չոա կեստուկ», «Շատիդու սարեր անուշ զոզան» և այլ երգեր), երեք զարկված աղջկա, ողջ-ողջ թաղված պատանուն, նրա խաչված քույրիկին, ծայրատված վարժուհուն:

*Մայրի՛կ, բողջադ առիր, էլար ո՞ւր գացիր,  
Վա՛յ, աման,*

*Դեր Չորի ճամփաները մեռնելո՞ւ գացիր...*

*Ա՛խ, ամա՛ն...*

Ազո երգերի մի երակը կազմող, ազատագրական և ֆիդայական պայքարի հերոսներին նվիրված եիշատակի երգերը սերտ առնչվում են հայ ժողովրդական վիպական և ոսգմի երգերի հետ<sup>11</sup>: Սրանք, եթե չեն կատարվել թաղման ժամանակ, հետագայում երգվել են նրանց եիշատակի օրերին: Այս երգերի մեջ լացի ու վշտի, սիրո և կարոտի մոտիվների հետ տեղ են գտել նաև եայրենասիրության, ազատասիրության ու հերոսականության մոտիվներ: Իրենց հող ու քրին, դյուցազուն նախնիներին հավատարիմ, անքուն, քաղցած ու ծարավ, փորձանքի ու թակարդի ենթակա՝ կովում ու տասնյակներով զոհվում էին նրանք, ընտելում, կախաղան բարձրացվում, և նրանցից մնում է մի քանի տող պատմություն գրքերի էջերում, մի քանի բերան երգ՝ ժողովրդի շուրթերին:

Կորսվող հայրենիքի հետ կորչում են նաև հարագատների գերեզմանները: Մի հուզիչ ողբ է գրառել Մ. Թումաճանը. հայուհին վերադառնում է հայրենի գյուղ և ավերակ գտնում այն. «Որտե՛ր ուրտեղ Մամա Քեմիդյանը պիտի ողբար իր կորուստները, ինչպես ողբացել են իր նախնիները անհամար տարիներ առաջ: Ինչքան նմանություն կա Հայաշիյարիի գանազան վայրերի, մանավանդ Ակնա շրջանի մեջ երգված ու ղեռ պահված օրորների և ողբերի կսկծալի եղանակների հետ... այս բոլորը

շարունակաբար գուգորդված են իրար. և այդ շղթան... մեզ կարող է տանել մինչև պատմության մեջ հիշված «լացող կանանց» ավանդույթին»<sup>12</sup>:

*Էլի՛ հաջի հայրիկ,*

*Գերեզմանիդ դուռը բաց.*

*Սեւգիլի զավակներդ*

*Վեր քեշեն մնաց:*

Աղջիկը սիրտը բացում է հոր գերեզմանին, նրան պատմում պատահած արհավիրքների մասին, կորած գերդաստանի, կարոտ մեռած հարագատների, Ստամբուլից փչած մահաշունչ հողմի և Տեր Չորի կողմերում կորած-մոլորած իր գառների մասին:

Թուրքին գերի ընկած ու զոհված երիտասարդների է ողբում ամենագողտրիկ սզո երգերից մեկը. «Կոունկ սիրեսը»<sup>13</sup>: Հայ ստեղծագործ մտքի ավանդական հնարանքով ողբերգուն դիմում է կոունկին և օգնության ու վշտակցության կանչում նրան հանուն նրա զույգ բալիկների սիրո:

*Ամա՛ն կոունկ, երկու բալիդ արեւը,*

*Յարըս մնաց Արզրումի սարերը.*

*Յարիս եսիր են տարե,*

*Ամա՛ն կոունկ, երկու բալիդ արեւը:*

Ռուսական բանահյուսության մեջ յացի երգերի ժանրի տակ են քննվում նաև գորակոչվող երիտասարդի և հարսնացող. աղջկա թախծերգերը: Հայ բանահյուսության մեջ դրանք տարբեր ծիսական և թովանդակային ստեղծագործություններ են, որոնց համար ընդեսնուր են ընթացման, հարագատ միջավայրից եեռանալու մոտիվները: Երիտասարդները, բնական օրինաչափությամբ, ավելի հաճախ պատահարի են ենթարկվում կամ զենքի զոհ են դառնում բանակային ծառայության ընթացքում: Օրինակ՝ 1898 թ. Ախալցխայում գինվորական ծառայության մեջ մեռել է Արիստակես անունով մի

<sup>10</sup> Նույն անդում, էջ 174:

<sup>11</sup> *Ղազիյան Ա.*, Հայ ժողովրդական ոսգմի և զինվորի երգեր, Երևան, 1989, էջ 75, 77:

<sup>12</sup> *Թումաճան Մ.*, նշվ. աշխ., հ. 1, էջ 217:

<sup>13</sup> *Հակոբյան Վ.*, Ներքին Բասենի ազգագրություն և բանահյուսություն, Երևան, 1974, էջ 309, Ա. Նազարյան, Էջմիածնի և Աշտարակի բանաեյուսությունից, Հայ ազգագրություն և բանահյուսություն, պ. 9, Երևան, 1978, էջ 112:

երիտասարդ, որի ընկերները հիշատակի սգո երգ են ուղարկել նրա հարազատներին: Երզը պատմում է նրա ծառայության, հիվանդության, մահվան և հայ տերտերով թաղվելու մասին<sup>14</sup>: 1903 թ. նույն կերպ «մահվան գերանդու բերանն է ընկել» «դեռահաս ու անմուրազ» զինվորը՝ հայրենիքի ու հարազատների կարոտը սրտում<sup>15</sup>: Ռուսաստանում ապրած, ռուսական բանակում ծառայած հայ երիտասարդը հրածեշտի խոսքեր է ուղղում Հայաստանի սուրբ լեռներին ու եղեմական աղբյուրներին: Օտար ավերում է վախճան գտնում նաև «Ամբախտ գդրիչի» դժբախտ հերոսը, որի ծայրը նվաղել է հարազատներին, տանջված մորը կանչելով: 1975 թ. Սև ծովում խեղդվող ընկերոջը փրկելիս գոհվում է զինվորական ծառայության մեջ գտնվող բաքվեցի Ռոդիկը: Նրա մոր սգում<sup>16</sup> արտահայտված են դասական սուգի գրեթե բոլոր մոտիվային նրբերանգները: Այս կարգի երգերում շեշտվում է եայրենիքի զինվորի կոչման վեհությունը, անսեր ու աներազ մեռնելու ցավի, դրվատվում ընդհանրապես ընդհանրապես ասալ ըմ՝ խելունք կկենաս, սլոթուն չանիս, ջահիլ ըս, ջիլլոթուն չանիս, քշտեդ կյոդ կընի, տու կյըդոթուն չանիս, պրանեդ թիքան հնգեղեդ նհետ կես կանիս: Հինչու ասալ ըմ, ըռալ ըս, պա ես քեզ ասալ ըմ կյանքդ էլ կես կանիս հնգերեդ նհետ: Ա նամարդ, պա կյանքը կես կանի՞ն»: Ամենամեծ վշտի պահին անգամ մայրը չի կորցնում մարդասիրությունը, չի չարանում, մաղթում է, որ նման վիշտ այլևս ոչ մեկին չայցելի:

Ուրիշ շեշտերը ունեն պատերազմների ժամանակ հյուսված սգո երգերը: Շատանում է մահը, ցավն ու վիշտը դառնում ընդհանուր, արյունն ու արցունքը՝ բոլորինը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ժողովուրդը հորինել է մի շարք ողբերգեր: Կռիվ

<sup>14</sup> *Փորջեղան Խ*, Նոր Նախիջեւանի հայ ժողովրդական բանահյուսություն, Հայ ազգագրություն և բանահյուսություն, պ. 2, 1971, էջ 40:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 42:

<sup>16</sup> *Հարությունյան Լ.*, նշվ. աշխ., էջ 317:

«սուգ ու շիվան է», այնտեղ հարյուրից մեկն է անվնաս մնում, դիակների սարեր են գոյանում, արյան գետեր, գնդակները շվշվում են. արկերը դողում: Հայը շարունակում է պայքարել իր դարավոր թշնամու դեմ:

*Սարախստվա թնդարոցին  
Լուս երեխեքս օրորոցին,  
Արբունի ծեռքը մնաց ծոցին,  
Սնաք բարով, ես գնում եմ*<sup>17</sup>:

Ջարկվում են ջահելները, իսկ իսադադությունը դանդաղում է, հապաղում, երկիրը մնում է գերի ու խեղճ, հիվանդ ու արնաքամ:

Ռուսաստանի քաղաքացիական կռիվներում դարձյալ հորդահոս էր հսոյի արյունն ու եղերերգը:

*Ելլարա դաշտերը ծուն է ու դուրան,  
Սար ու քար էլ լացին Ռուբենի վրա*<sup>18</sup>:

Սգո ու հիշատակի երգեր են հյուսվել նաև Հայոենական պատերազմի տարիներին («Ես վիեժն եմ», «Կերչ քաղաքի գլխի լալեն», «Սամբեկի դերան», «Ու ծովի ավին», «Երբ որ հասանք», «Ռոստովի երզը», «Նելսոն», «Ջալալանի», «Կոստյունը պատից» և այլն)<sup>19</sup>: Սրանք տաղաչափական ու կառուցվածքային նմանություններ ունեն ժամանակի այլ բանահյուսական ստեղծագործությունների հետ, որոնցից գատվում են բովանդակությամբ: Բոլորի մեջ էլ խոսքը պատվում է նույն առանցքի շուրջ. կռիվ նկարագրություն, սպանվելու պահի պատկեր, հրածեշտ հարազատներին, նրանց կսկիծի պատկերացում և անեծք թշնամուն: Որոշ քնարական հերոսներ ինդրում են իրենց մահը թաքցնել մորից, իսարել վիրավորված լինելու պատրանքով, մյուսները սարսուռ են օտարության մեջ վախճանվելուց: Պրկված երևակայությունը պատկերացնում է սև սնդուկը՝ հայրենի դռան առաջ և հարազատների ասրումները: Դարձյալ մարդու վշտից անբաժան է բնության պատկերը.

*Արեւը մայր մտավ, լուսնյակը ցուլաց,*

<sup>17</sup> *Գրիգորյան Գր.*, նշվ. աշխ., հ. 5, երգ 89:

<sup>18</sup> *Ղանալանյան Ա.*, Հայկական խորհրդային ֆուլկորը, էջ 70:

<sup>19</sup> *Գրիգորյան Գր.*, նշվ. աշխ., Ա. Ղազարյան, նշվ. աշխ., Ա. Ղանալանյան, նշվ. աշխ.:

*Նավը կռակ տվեց, Աղվանը դողաց.<sup>20</sup>*

«Խարեք մորս, վորավոր եմ», «յանա, յանա, դիլիոր րան ա» և այլ կրկնությունները վշտի մեծ շունչ են հաղորդում երգերին:

Ղարարադյան ազատագրական պայքարի օրերին մահը ըմբռնվում է ոչ որպես ընկալական երևույթ, այլ՝ նվիրարեցնում հայրենիքին, կամավոր զոհ՝ ժողովողի, երկրի, հողի փրկության համար: Նորից առատացել է որդեկորույս մայրերի ողորդ, մեր դիտարկմամբ այն, պահպանելով ավանդական մոտիվները, ձեռք է բերել որոշ նոր երանգներ:

ա) Շեշտված է ընդվզումը ժամանակի չարության ու դաժանության դեմ՝ պայմանավորված պատերազմի անսովոր ընկալմամբ ու հերոսականությամբ: «Էս հի՞նչ ժամանակներ ա, ա ժողովորդ, պա մարը ուռթանան քշերավ յեր կկենա, ծեն տա, ուրան ըլտանցր եր կցնե, սունկան կապե, դարկե գյուլլին ռե՞խը»:

բ) Ամեն թույլ սպասվող մահվան առօրեական դառնալուց, նրա անհրաժեշտության զիտակցությունից, ցավո ընդհանրությունից ռիսո դիմադրողականության զորացում, միմյանց սատարելու մեծ ցանկություն:

գ) Լահը անհատական երևույթ չէ, յուրաքանչյուրը դիտարկվում է մյուսների շարքում և նրա առաջը հնարավոր է առնել թշնամուն հաղթելով, խաղաղությամբ: Դրա համար ցանկություններից մեծագույնը համարվում է պատերազմի ավարտը:

դ) Ցավոն միանում է հպարտության զգացումը. «Ղարարադա հերոս Սամվել, ընըմետ արժանի Սամվել, մեր վեդեն պաշտպան Սամվել, եղուտ-յըդըթաթախ րալա...» կամ «Ա դարդուտ հար, ա եթիմ հար, չորս սալդաթ ըս տվալ էս շենիմ»:

ե) Շոշափվում են հանգուցյալի օգտագործած զենքի տեսակը, վերջին կռիվը, մեռնելու պահը, թշնամուն տված նրա վնասը. «Շատ ըս թորք քցալ տանկետ տակը, պա ի՞նձ խե քցեցեր տակը, վեր վեչ մեռնիմ, վեչ կենամ»:

զ) Հնուց եկած սզո երգերի նման այստեղ էլ անհիծվում է թշնամին, արժանանում պարսավանքի ու նզովքի. «Թորքը փըրթվո, վեր արունը պերավ քցից էս լավ ըշխարքես մաչը»:

է) Պատերազմի ժամանակ զոհվողը մեծ պարտականություն ունի իր ուսերին. հարկ է պարզերես մեռնել, չփախչել պայքարից, չթաքնվել, ընկերոջը չլքել վտանգի պահին, վախկոտ չլինել: Պատերազմը իր օրենքներն ու բարոյականությունն ունի, և եթե դրանց հավատարիմ է զինվորը, նրան փառք ու պատիվ է վոճակված այս ու այն աշխարհներում. «Էն ըստժու անա կաթած հրամանատար Ավոդ ա կիլական առաջդ, մաշկդ խտտլական ա, ասե՛ մամուսավ ըս եկալ»:

Ինչքան էլ ընդհանուր լինի սուգը, յուրաքանչյուր անգամ այն ունենում է անհատական ինքնօրինակ նրբերանգներ:

<sup>20</sup> *Գրիգորյան Գր.*, նշվ. աշխ., երգ 256: